Թագուհի

Ժամանակի սահմանափակում՝ 0.3 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 128 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Շախմատի տախտակի վրա `64` վանդակներում թվեր են գրված: Հարկավոր է թագուհին տեղադրել այնպես, որ բոլոր այն վանդակների թվերի գումարը, որոնց հարվածում է թագուհին, լինի մաքսիմալ: Պահանջվում է արտածել այդ գումարը:
Թագուհին կարող է տեղափոխվել ցանկացած դաշտ՝ հորիզոնական, ուղղահայաց ուղղություններով և անկյունագծերով:

Մուտքային տվյալներ

Մուտքում տրված է ութ տող, յուրաքանչյուր տողում՝ ութ ամբողջ թիվ: Յուրաքանչյուր տողում թվերն իրարից անջատված են մեկական բացատով: Թվերը բացարձակ արժեքով չեն գերազանցում `1000`-ը:

Ելքային տվյալներ

Ելքում պետք է արտածել պահանջվող մեծագույն գումարը:

Օրինակ

Մուտք	**Ելք**
`0 1 2 3 4 5 6 7` `0 1 2 3 4 5 6 7` `0 1 2 3 4 5 6 7` `0 1 2 3 4 5 6 7` `0 1 2 3 4 5 6 7` `0 1 2 3 4 5 6 7` `0 1 2 3 4 5 6 7` `0 1 2 3 4 5 6 7`	`104`